

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Հայ Նուագարանային Երաժշտություն. Պարեղանակներ (կազմող՝ Աշոտ Մուրադեան, մասնագիտական խմբագիր՝ Խաչիկ Մարտիրոսեան, մատենաշարի գլխավոր խմբագիր՝ Կարինե Խուդաբաշեան-Մարգսեան), «Հայ Ամանդական Երաժշտություն» մատենաշար, Հտր. Ա., եւ Գ., Երեւան, «Ամրոց» Հրատ., 2008:

Արամ Քոչարեան, *Հարկանային եւ Շնչական Նուագարանները Հայաստանում*, աշխատասիրութեամբ Կարինե Խուդաբաշեանի, Հոփսիսիմե Պիկիչեանի, Ժասմէն Մեհրաբեանի, Անահիտ Բաղդասարեանի, Երեւան, «Ամրոց» Հրատ., 2008:

Նորություն չէ, որ ցանկացած ազգի ինքնութեան պահպանման երաշխիքը առաջին հերթին պետականությունն է: Սակայն ոչ-պակաս կարեւոր են լեզուն եւ հոգեւոր մշակութային ժառանգությունը: Այսօր համաշխարհայնացման պայմաններում գրեթէ բոլոր ազգերը կանգնած են մի խնդրի առջեւ՝ պահպանել եւ սերունդներին փոխանցել ազգային նկարագիրն ու ինքնությունը: Խնդրի լուծման տարբեր ուղիներ են փնտռում մասնագետները եւ բերում նորանոր առաջարկներ: Մի բան պարզ է՝ նախեստառջ պետք է պահպանել, անաղարտ ներկայացնել եւ զարգացնել մշակութային ժառանգությունը:

Իրաքանչիւր ժողովրդի մշակոյթը, մասնատրապէս բանահիւսությունը, երաժշտությունն ու պարը ժամանակների միջեւ լաւագոյն բնականոն կապողին են: Ունենալ ազգային աւանդական երաժշտութեան ձայնադարան՝ կը նշանակի ունենալ ազգի պատմութեան տարբեր շրջանների մասին բազմակողմանի տեղեկատվություն ստանալու բացառիկ հնարատրություն եւ միջոց: Մշակութային հարուստ ժառանգութեան տէր ժողովուրդն այսօր իրաւունք չունի սահմանափակուել միայն պահպանումը աւանդական երգերն ու նուագները հնչեցնելով ու յղկելով: Նման երաժշտական, պատմա-գեղարուեստական արժէք ներկայացնող նիւթը անբաւ շտեմարան է ոչ միայն երաժիշտների, այլ նաեւ արուեստաբանների, պատմաբանների, հնագէտների, ազգագրագէտների ու հայագիտութեամբ զբաղուող տարբեր մասնագէտների համար:

ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Արամ Քոչարեանի Անուան ձայնադարանը աւանդական (գեղջկական, քաղաքային, աշուղական երգեր ու նուագներ, երաժշտական պատումներ, ժողովրդական եւ ժողովրդապրոֆեսիոնալ կատարումներ) երաժշտական մշակոյթի մի իւրայատուկ գանձարան է: Չայնագրուած մնուշները ներկայացնում են պատմական Հայաստանի գրեթէ բոլոր խոշոր մարզերի ժողովրդական երաժշտարուեստը: Չայնագրութիւնների թիւը շուրջ 20 հազար է եւ ներառում է 1927ից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Անելորդ է ասել, թէ այս երգերի ու նուագների լոյսընծայումն ինչպիսի ներդրում կը լինի հայ ժողովրդի մշակութային կեանքում եւ որքան լիարժէք պատկերացում կը ստեղծի ժողովրդական երաժշտութեան տարբեր

սեռերի ու քեմատիկ առանձնատկությունների ու կատարողական արուեստի մասին:

Դեռևս 1985ին Արուեստի Ինստիտուտի Ժողովրդական Երաժշտության Բաժնի Վարիչ Կարինե Խոտաբաշեան-Սարգսեանն առաջարկեց ձայնադրանի հիման վրայ 30 հատորանոց մատենաշար ստեղծել: Տարիների ընթացքում բաժնի գիտաշխատողների կողմից հրատարակման պատրաստույթ ժողովրդական երգերի ու նուագների 8 ժողովածու: Վերջապես 2008ին պետական պատուերով ՀՀ Մշակույթի Նախարարության հովանաորութեամբ իրականացուեց «Հայ Աւանդական Երաժշտութիւն» բազմահատոր մատենաշարի առաջին հատորի հրատարակումը՝ *Հայ Նուագարանային Երաժշտութիւն. Պարեղանակներ* վերտառութեամբ:

Հայոց աւանդական նուագների ամբողջական հաւաքածուի ստեղծման անդրանիկ փորձը պատկանում է ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի նախկին գիտաշխատող, երաժշտագետ-բանագետ Աշոտ Մուրադեանին, որը վերծանել, ուսումնասիրել եւ դասակարգել է աւանդական նուագարաններով (դուդուկ, գուռնա, պարկապուկ, սրինգ, շուի, դիու, քառ, քամանչա, քեմանի եւ քեմոնա) հնչող հայոց պարեղանակների ընտրանին: Նուագարանային հատորներ կազմելիս Աշոտ Մուրադեանը նպատակ է ունեցել մասնագետներին եւ սեռի երկրպագուներին ներկայացնել Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս բնակուող հայերի կեանքում հնչող գործիքային նուագների ամբողջական պատկերը:

Գրախօսուող հատորը հիմնուած է 1957-1959ին հայ բանահաւաք-երաժշտագետներ Մատթեոս Մուրադեանի, Ալեքսանդր Թադևոսեանի ձայնագրած գիտարշաւային նիւթերի, ինչպէս նաեւ Աշոտ Մուրադեանի՝ 1986ին Արխագիայում հանշէնահայերից ձայնագրած նմուշների վրայ: Վաղաժամ հետազոտով կեանքից՝ (2003) Աշոտ Մուրադեանը չհասցրեց տեսնել իր բազմանշայ աշխատանքի արդիւնքը: Վերջնական խմբագրման եւ սրբագրման աշխատանքները կատարել են Ժողովրդական Երաժշտութեան Բաժնի աշխատակիցներ Զաւէն Թազակչեանը, Հռիփսիմ Պիկիչեանը եւ Ժասմէն Մեհրաբեանը:

Հատորը կազմուած է չորս բաժնից եւ ընդգրկում է Հայաստանի Վայքի եւ Շիրակի մարզերի, ինչպէս նաեւ Արցախի եւ Արխագիայում բնակուող հանշէնահայերի պարային-նուագարանային երաժշտութեան 53 նմուշ: Իւրաքանչիւր բաժնում պարեղանակները դասդասուած են ըստ նուագարանների՝ փողային, լարային (մենակատարային եւ նուագախմբային կատարումներ): Բոլոր նմուշները նոտագրուած են պարտիտուրի տեսքով, պահպանուած է առանձին նուագարանների եւ նուագախմբի (դաստա) ինքնատիպութիւնը: Հատորը համալրուած է նախաբանով, հայոց բազմադարեան երաժշտական աւանդոյթում տեղ գտած ժողովրդական նուագարանների վերաբերեալ պատմական համառօտ ակնարկով, նիւթի եւ այն վերարտադրող նուագարանների մասին մանրակրկիտ տուեալներով, ծանօթագրութիւններով եւ ցանկով: Այս ամէնը ներկայացուած է երեք լեզուով՝ հայերէն, անգլերէն եւ ռուսերէն:

Մատենաշարի երկրորդ հատորը, որի հեղինակը եւս Աշոտ Մուրադեանն է, ամփոփում է նուագարանային երաժշտութեան մնացեալ սեռերը եւ նախատեսուած է հրատարակել 2010ին:

2008ին լոյս է տեսել նաեւ մատենաշարի երրորդ հատորը, որտեղ առաջին անգամ հրապարակուել են ակնաւոր երաժշտագէտ-բանահաւաք, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) երաժշտանոցի ուսուցչապետ Քրիստափոր Կուշնարեանի ղեկավարած գիտարշաւների միութեը՝ գրանցուած 1927-1929ին. Հայաստանում եւ Վրաստանի հայաշատ վայրերում: Այդ գիտարշաւներին մասնակցել են նաեւ ֆուկլորագէտներ Եւգենի Գիպպիուսը, Ջինաիդա Էւալդը, երաժշտագէտ Եւրի Տիլինը, կոմպոզիտորներ Յարօ Ստեփանեանը եւ Տ. Տէր-Մարտիրոսեանը: Երեք գիտարշաւների ընթացքում ֆոնոգրաֆով ձայնագրուել է շուրջ 550 նմոյշ, որոնք ինչ-ինչ պատճառներով երկար ժամանակ մնացել են Լենինգրադի ԳԱ Ռուս Գրականութեան Ինստիտուտում եւ միայն 1960ականներին Երեսանի Պետական Երաժշտանոցի ուսուցչապետ Ռոբերտ Աթայեանի շնորհիւ պատճենագրուել են ձայներիգի վրայ եւ փոխանցուել ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Արամ Քոչարեանի Անուան Չայնադարանին: Տարիների ընթացքում քայքայուած ձայնագրման գլանիկներից հնարաւոր եղաւ վերաձայնագրել միայն 487ը: Այդուհանդերձ, մեզ հասած միութեը բացառիկ հետաքրքրութիւն ու արժէք է ներկայացնում՝ իր բազմազան սկզբների հայկական երաժշտական կեանքի վաւերագիր:

Ներկայ ժողովածուում ընդգրկուել է գիտական-գեղարուեստական բարձր արժէք ներկայացնող 143 նմոյշ, որոնք նոտագրել, խմբագրել եւ դասակարգել են Ժողովրդական երաժշտութեան բաժնի աշխատակիցներ Դաւիթ Դերոյեանը եւ Ջաւէն Թազակչեանը: Ընտրանու դասակարգումը կատարուել է ժանրային-թեմատիկ սկզբունքով՝ օրօրերգեր, աշխատանքային, կենցաղային-պատմողական, զինուորագրութեան երգեր, մահերգեր, սիրերգեր, կատակերգեր, պարերգեր, զուգերգեր, հոգեւոր երգերի ժողովրդական տարբերակներ, պարեղանակներ եւ նուագներ:

Ակնառու է Դերոյեանի, Ջաւէն Թազակչեանի կատարած նոտային վերծանութիւնների, ինչպէս նաեւ Հովհաննէ Պիկիչեանի տեքստային վերծանութիւնների մասնագիտական բարձր որակը: Նրանք հնարաւորինս հարազատ են մնացել արդի ֆուկլորագիտութեան մէջ ընդունուած սկզբունքներին՝ միաժամանակ չդաւաճանելով բանասացների աւանդական երաժշտական մտածողութեանն ու կատարման կերպին:

Հատորն ունի նախաբան, ծանօթագրութիւններ, բարբառային եւ անհասկանալի բառերի բառարան, ռուսերէն եւ անգլերէն անուանացանկեր:

2008ին ՀՀ ԳԱԱ Արուեստի Ինստիտուտի Ժողովրդական Երաժշտութեան Բաժնի գիտաշխատողներ Կարինէ Խուդաբաշեանի, Հովհաննէ Պիկիչեանի, Ժասմէն Մեհրաբեանի եւ Անահիտ Բաղդասարեանի աշխատասիրութեամբ լոյս տեսաւ եւս մէկ աշխատութիւն՝ Արամ Քոչարեանի *Հարկանային եւ Շնչական Նուագարանները Հայաստանում* ուսումնասիրութիւնը, որի հիմքում ընկած է հեղինակի՝ 1963ին պաշտպանած թեկնածուական ատենախօսութիւնը: Սոյն աշխատութիւնն իր տեսակի մէջ եզակի է՝ նշուած նուագարանների համակողմանի եւ խորը հետազօտման ու ներկայացման առումով:

Ուսումնասիրությունը բաղկացած է առաջաբանից, երկու գլխից, վերջաբանից, ծանոթագրություններից եւ օգտագործուած գրականութեան ցանկից, ինչպէս նաեւ ուսումնասիրուող նուագարաններով հնչող նիւթերի նոտային վերծանութիւններից, չափագրութիւններից (Արամ Քոչարեան) եւ լուսանկարներից:

Առաջաբանում հեղինակը համառօտ ներկայացնում է նուագարանների ծագման եւ զարգացման փուլերը՝ սկսած Հին Քարէ Դարի շրջանից մինչեւ Ի. դարի կէսերը: Իւրաքանչիւր գլխում մանրամասն դիտարկուծ են նուագարանի տուեալ ընտանիքի ծագումնաբանական, զարգացման, գործառութային, կենցաղավարման միջավայրն ու փոխառնչութիւնները: Առաջնորդուելով համեմատական երաժշտագիտութեան մեթոդներով՝ հեղինակը բացայայտում է նուագարանների պատրաստման հումքի, կառուցուածքի, հնչարտաբերման, ձայնաձաւալի, գրական, ժողովրդախօսակցական եւ օտարալեզու եզրաբանութեան օրինաչափութիւններն ու տարբերութիւնները աշխարհի տարբեր ժողովուրդների մշակոյթներում: Այս խնդիրները զուգորդում են դիցաբանութեան, ազգաբանութեան, հնագիտութեան, մանրանկարչութեան եւ կիրառական արուեստի տուեալների համադրութեամբ:

Գրքում զետեղուած են նաեւ անուանի երաժշտագէտի կեանքն ու գործունէութիւնը ներկայացնող (Կարինէ Խուդաբաշեան-Սարգսեան) եւ հետազօտութիւնն արժեւորող (Հռիփսիմէ Պիկիչեան) յօդուածներ:

Հայոց աւանդական նուագարանների երկու ընտանիքներին նուիրուած այս աշխատութիւնն անգնահատելի նուէր է երաժշտագէտների եւ հայոց երաժշտական մշակոյթով բոլոր հետաքրքրուողների համար:

ՍԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍԵԱՆ